

ուրիշ տեղ: Հաւատան, դու յաւիտեան անպատասպարան չես մնար:

Ճգնաւորը լսեց: Արևելքում՝ երկնքի ծայրը սկսեց շառագունել. սկսեց լուսանալ, լուսանալու հետ միասին՝ եկուորի խօսքերից յետոյ սկսեց լուսաւորուիլ և խղճի թախծալից երեսը: Նա հանգցրեց պատանիների սարսափելի կերտները. վառեց մաքուր իւղով լապտերը, իջաւ բարձրութիւնից և իսկոյն և եթ անյայտացաւ ամբօխի մէջ

Ընթերցող, եթէ պատահի լսես թէկուզ թոյլ բաղխում կամ ձայն սրաիդ շէմքում, խուլ մի մնար, դա աշխարհի տանջուող ոգին է, մարդկանց խիղճը և ապաստանարան է խնդրում, բաց արան նրա առաջ հողիդ, դէթ ժամանակաւորապէս ընդունիր Ատուծոյ հիւրին:

(Շարունակելի).



ՀՈՌՈՎՄԱՅՆՆԵՏԻ ՀԸՐԻԻՐԸՊԵՏԸ*)

Ք. Մարիվէ.

Մօտաւորապէս առաւօտեան ժամի 10 էր, երբ որ նրան քահանայապետի գաւիթը տարին: Ամբողջ դատը կատարուեց զարմանալի, անբնական արագութեամբ: Դատարանի գաւթում զօրքեր էին կանգնեցրել. առանց նրանց մասնակցութեան անկարելի էր մահուան պատիժ կատարել, և այդ կաշառուած, հրէաների իշխաններից ու ծերերից գողգուած զինուորներն սկսեցին տանջել Դատապարտուածին:

Ինչպէս և նախորդ գիշերը, քահանայապետի նախագաւթում, հարուածներ էին տալիս նրա գլխին, թքնում

*) Нива, 1893 г. № 12.

Նրա երեսին ու գնելով նրա գլխին փշեայ պսակը, հարուածում էին եղեգնեայ դաւազանով նրա ստերին, որպէս զի փշերն աւելի խորը ծակելով Մահապարտի գլուխը, նրա տանջանքը սաստկացնեն: Ինչպէս և գիշերը, հոովմայեցի զինուորները նրան ծաղրում էին՝ թագաւոր անուանելով ու երկրպագում՝ կրկնելով այն, ինչ որ գիշերն արել էին հրէից իշխանները:

Բայց այդ շարչարանքից յետոյ (վերջին 13 ժամուայ ընթացքում նրան ձեծեցին երեք անգամ) նա այն աստիճան թուլացաւ, որ այնուհետև նրան տանջելն արդէն վտանգաւոր էր: Երբ որ նրան տանում էին խաչելու, նա, բոլորովին ուժասպառ եղած, հազիւ հաղ կարողանում էր քայլել, իսկ խաչն անկարող էր տանել այլ ևս, թէև ստիպում էին նրան . . . Նա տարաւ նրան մի քիչ ժամանակ, բայց նրա ծանրութեան տակ վայր ընկաւ . . . և խաչը պարտաւորուեց տանել կիւրենացի Սիմէօնը:

Ժողովուրդը, մոռանալով, որ վաղը մեծ շաբաթն է, իսկ այսօր ազօթքի օր է, աղմուկ-աղաղակ բարձրացրած վազում էր նրա ետեից: Այստեղ էին և՛ նրա թշնամիները, և՛ այնպիսի մարդիկ, որոնք սառնասիրտ էին դէպի նրա անձնաւորութիւնը, կային և՛ այնպիսիներ, որ ամստում էին նրան. ոմանք՝ լոկ իբրև մի մարդի, այլք՝ ինչպէս մի անմեղի, մի մասն էլ ինչպէս մի մարդարէի: Ամբօխի մէջ էին նոյնպէս հրէից ինքնաբաւական իշխաններն ու ծերերը: Այստեղ կային և այնպիսի վշտահար ու ընկճուած մարդիկ, որոնց սրտերը կտրատուում էին, բայց և այնպէս անկարող էին յայտնել իրենց վիշտը, — նրա աշակերտներն էին դրանք ու հետևողները . . .

Նրան խաչեցին: Մահապարտի դատավճիռը կատարողները, հրէից բարձր դասակարգի ներկայացուցիչները, մինչև անգամ այստեղ չը ցաւակցեցին նրան, որ նրանց կարծիքով արդէն ուժասպառ եղած էր: Նրանք վրէժխնդիր էին լինում նրան, և գիտնալով, թէ ծաղրելը առհասարակ ինչ աստիճան ներգործում է մարդու վրայ, նրանք հաւաքուում էին առանձին խմբերով խաչի մօտ ու ասում.

«ուրիշներին ազատում էր, բայց իրեն չէ կարողանում ազատել . . .»:

Նրանք աշխատում էին, որքան կարելի է, աւելի ծանրացնել նրա վերջին բողոքները, և կարձեռ նրանք արդէն հասել էին իրենց նպատակին. նա յանկարծ ազաղակեց, «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողիր Ձիս»:

Բարձր դասակարգը յորդորում էր, և հրէական ժողովուրդը— թեթեամիտ, տգէտ ամբօխը, հետևելով իւր վարդապետների ու գիտնականների օրինակին, ցնծութեան աղաղակներով ուղեկցում էր գնաց ին, ցնծութեան մէջ էին նոյնպէս հռովմայեցի զինւորները, որոնց վրայ տակաւին թարմ էր հրէից փողի ազդեցութիւնը . . . :

Սակայն այդ զինւորների մէջ կային և այնպիսիներ, որոնք կամակից չէին կատարուող մահուան պատժի: Հարիւրապետը, որի անունն էր Ղունկիանոս, ցաւակցութեան, վշտի ու ներքին կշտամբանքի ծանր զգացմունքով համակուած, դիտում էր Խաչուածին, նրա հետևողներին, նրա Մօրը, որ խաչի մօտ կանգնած էր, իւր ստորադրեալներին ու հրէից ժողովուրդին:

Լինելով հարուստ ու կրթուած, կապադովկիայում սեփական կալուածների տէր, նա անձամբ ծանօթ էր կայսեր, և յայտնի էր հռովմէական և թէ հպատակ ազգերի հասարակութեանց բարձր ու ստորին խաւերում իւր ազնուութեամբ, ուղղութեամբ ու անկաշառ բնաւորութեամբ:

Կանգնած խաչի դիմաց, նա առ այժմ աշխատում էր չմոռանալ միայն մի բան, որ զինւորականի գլխաւոր արժանաւորութիւնն է— անպայման հնազանդութիւն՝ իշխանութեան,— և այս պատճառով էլ լուռ կեցած, առանց արգելելու և առանց յետ կասեցնելու, նայում էր, թէ ինչպէս զինւորները բաժանում էին Խաչուածի հանդերձներն ու փիճակ ձգում նրա պատմուճանի վրայ: Բայց նա գիտէր, որ իւր ստորադրեալներից երկուքը, ինչպէս և նա ինքը, վշտացած սրտով ստիպուեցան ակամայ ներկայ գտնուիլ այստեղ, այն կատարուող մահուան պատժի մօտ,

և որքան աւելի կանգնեց նա, որքան ուշագրութեամբ հետեւեց նա կատարուող գործին, այնքան աւելի մեծացաւ նրա մէջ, նրա հոգու խորքում մի ինչ-որ վրդովեցնող և միևնոյն ժամանակ նոր, ընդարձակ, շերմեռանդ ու դեղեցկագոյն մի բան, որ բացեց նրա համար մինչև այդ ժամանակ չտեսնուած տարածութիւն: Երբ որ կէսօրին խաւարը պատեց տիեզերքը ամբողջ երեք ժամ, գետինը շարժուեց ու Խաչեցեալն Իւր հոգին աւանդեց, այն ժամանակ այդ հեթանոսի հոգու մէջ ծագեց ճշմարիտ լուսոյ ճառագայթը:

Այժմ նա այլևս չէր կարող լուել, ոչ մի ղինւորական կարգապահութիւն չէր կարող նրան արգելել, և նա, իւր երկու ստորագրեալներէ հետ միասին դաւանեց մի սկզբունք ու էութիւն, որն այնուհետև շատ ժողովուրդների հաւատքն եղաւ: Նա Որդի Աստուծոյ անւանեց խաչի վրայ մեռնողին*):

Սակայն հրէից ձերերը քնած չէին: Յաճախ պատահում էր, որ խաչի վրայ պատժուածները մեռնում էին երկրորդ, երրորդ, նոյն իսկ չորրորդ օրը, և մահն առաջ էր գալիս ոչ այնքան իսկական պատժից, սրբան նրանից առաջ եկած տանջանքից ու սովից: Այս պատճառաւ էլ ձերերն եկան կառավարչապետից թոյլտութիւն խնդրելով՝ արուեստական կերպով պատժուածների մահն արագացնելու համար: Հետեւեալ օրը աւագ շարաթ էր, — հրէաների եգիպտական դերութիւնից ազատուելու յիշատակը, հետեւաբար չէր կարելի թողնել, որ պատժուածների օրէնքը փչացնէր տօնախմբութեան տպաւորութիւնը:

Կառավարչապետն համաձայնուեց: Հռովմայեցիք սոփորութիւն ունէին՝ ցաւակցութիւնից դրդուած՝ արագացնել խաչի վրայ մեռնողների մահը, սրով ծակծակելով պատժուածների սիրտը, ուստի այս անգամ էլ կառավարութիւնը հրէից խնդրածի մէջ օրինաց ընդդէմ ոչինչ չ'գտաւ:

*) Մարկ. 15 Գլ. 39 հմբ.

Թոյլաւութիւն ստանալով, հրէից ինքնաբաւական բարձր գասակարգը նորից զինւորներ զրկեց պատժի տեղը, պատուիրելով, որ խորտակեն խաչուածների ծնկները: Զինւորները կատարեցին նրանց հրամանը, քաղաքից դուրս գալով, նրանք գնացին կառաւփման տեղը և հրամանը յանձնեցին հարիւրապետին: Սա առանց դիմադրելու թողեց, որ հրամանը կատարեն, և զինւորները սկսեցին ջարդել տանջող ու հառաչող աւազակների ծնկները: Մեռցնելով մէկին, ապա միւսին, նրանք վերջապէս մօտեցան Յիսուսին, որ լուռ կեցած էր, և զարմացած նկատեցին, որ Նա կախուած էր խաչի վրայ անշարժ ու խաղաղ, որովհետև արդէն մեռած էր:

Ծնկները խորտակելու, այսինքն, Նրա մարմինը այլանդակելու կարիք չգգացուեց, ըայց և այնպէս անհրաժեշտ էր իշխանութեան հրամանը կատարել միևնոյն ժամանակ համողութեւն համար, որ Նա արդէն մեռած էր, որպէս զի նրան կենդանւոյն խաչից վայր իջեցրած չը լինեն:

Եւ ահա ի կատարումն իւր զինւորական պարտականութեանց, զօրականներից մէկը, — ըստ սմանց՝ ինքը, Ղունկիանոսը, որով խոցեց Նրա կողը, որտեղից դուրս ցայտեց արիւն ու ջուր, որից մի կաթիլ ընկաւ հարիւրապետի աչքին:

Երեկոյ եղաւ: Ամեն բան կատարուած — վերջացած էր. զատկական դառն արդէն զոհուած էր և մարդիկ, առանց հասկանալու իրենց կատարած գործի նշանակութիւնը, սկսեցին շտապել գէպի իրենց տները, — «ճանապարհորդի նման, գօտիները կապած, — անարատ գառը կոտրմով ուտելու համար», ինչպէս որ Մովսէս հրամայել էր նրանց:

Ղունկիանոսը նոյնպէս վերադարձաւ Երուսաղէմ: Այնտեղ, խաչերի մօտ մնացին մի միայն նրանք, որոնք պիտի թաղէին պատժուածների մարմինները: Առհասարակ այդպիսիներին թաղում էին իրենք, այսինքն իշխանութեան կողմից վարձուած մարդիկ և շատ շտապօք, ուստի

և Յովսէփ Արեմաթացին տեղեկանալով, որ Նա արդէն մեռած է, իսկոյն գնաց և խնդրեց, որ թոյլ տան իրեն՝ պատուով թաղելու խաչեցեալ Յիսուսի մարմինը. Ինչպէս ծերակոյտի անդամ, այսինքն, իբրև մի երևելի մարդ, նա աւելի յոյս ունէր իւր խնդրի յաջող ելբի մասին ծայրագոյն իշխանութեան մօտ, և իրաւ, նա հասաւ իւր ցանկութեան: Կառավարչապետն սկզբից զարմացաւ ու չ'հաւատաց, որ Նա այդպէս շուտ մեռած լինի, բայց կանչելով իւր մօտ Դունկիանոս հարիւրապետին և նրանից ստուգելով Յիսուսի մահը իւր բոլոր մանրամասնութեամբ, շնորհեց նրան՝ հրէից ծերակոյտի այդ յարգելի անդամին, պատժուածի մարմինը:

Հասաւ մեծ շաբաթը,—ամեն գործերից դադարելու և հանգստանալու օրը. հրէից առաջաւորները սակայն հանգիստ չունէին: Լսելով Արեմաթացի Յովսէփի մասին, որը ց'արդ պահպանու՞մ էր նրանցից, որ ինքը Յիսուսի հետևողներից է, հրէից առաջաւորները չկարողացան հանգստանալ: Ամեն տեսակ կասկածանք ու անհեթեթութիւնք սկսան ծագել նրանց սրտերում, և չ'նայելով, որ եօթնեկի վերջին օրն էր, Աստուծոյ նուիրուած, նրանք նորից գնացին կառավարչապետին անհանգիստ անելու՝ իրենց սպառնացող՝ կարծեցեալ վտանգներով:

Լսելով նրանց, կառավարչապետը վրդովուեց, նրանք ուրբաթ առաւօտեանից ի վեր անհանգիստ էին արել նրան, ստիպել էին նրան անել այն բանը, որի համար, երկու օր է, որ նրա խիղճը տանջում է նրան, և որի մասին—նա գիտէ այդ—իւր ամբողջ կեանքին պիտի յիշէ խղճահարուելով: Նա զայրացած պատասխանեց նրանց. «Ոչ ապաքէն ձեզ մօտ կան պահապան զինուորներ, որոնց երէկուանից ես գրի ձեր տրամադրութեան ներքոյ. արէք, ինչպէս որ կամենում էք, ինչպէս որ գիտէք, իսկ ինձ հանգիստ թողուցէք»:

Եւ հրէից առաջաւորները, այս անգամ էլ իրենց ցանկութեան հասած, կառավարչապետի անուշով հրամայեցին զօրապետներին՝ պահապաններ կանգնեցնել Յի-

սուսի գերեզմանի մօտ, որպէս զի աշակերտները չ'գողանան Նրա մարմինը և, շուտափոյթ զրկեցին նրանց Յովսէփ Արեմաթացու պարտէզը:

Հարիւրապետը դնաց կատարելու իւր պահնորդական պարտականութիւնը. — գերեզմանի պահպանութիւնը նրան էր յանձնուած մինչև երրորդ օրը:

Զինւորները կարող էին կաշառուել ու Նրա աշակերտներին թող տալ քարայրին մօտենալու, այն ժամանակ առաջ կը դար ամեն տեսակ բարդութիւն, բայց Ղունկիանոսի մասին նոյնը չէր կարելի մտածել: Նա ինքը շատ հարուստ էր և Նրա ազնւութեան համբաւը նրան շատ հեռու էր պահում սոյնպիսի կասկածանքներէր:

Հրէաները, շատ խօսքերով բացատրելով նրան, թէ ինչու մն է գործը և թէ ինչ բանից պէտք է վախնալ, խնդրեցին նրան՝ ամենայն զգուշութեամբ ու աչալըջութեամբ կատարել իւր պարտքը: Ղունկիանոսը լսում էր այդ ամենը առանց մի խօսք ասելու, այդ միջոցներին Նրա մէջ կատարուել էր մի ինչ-որ արտասովոր բան:

Նա երկար ժամանակ տանջւում էր աչքի ցաւով, և ահա այն օրից, երբ Խաչեցեալի արիւնը ցայտեց նրա աչքին, ցաւը դադրեցաւ, անհետացաւ և բորբոքոււմը: Բայց նա ինքը, մարդկային յատուկ թուլութեամբ, կասկածանքով էր վերաբերւում դէպի եղելութեան ճշտութիւնը, լռում նրա մասին, աշխատելով բժշկութիւնը վերադրել ուրիշ որ և իցէ պատճառի, և միայն յամառութեամբ ու ուշադրութեամբ մտիկ էր անում ձերերի բացատրութիւններն ու պատուէրները: Զգալով, որ ինքը կոչուած է կատարելու մի մեծ գործ, նա ուզեց ստուգել ինք իրեն և իւր տեսածները, և վճռեց անթարթ աչօք պահպանել և՛ պարտէզը, և՛ քարայրը, և գերեզմանի կնիքը՝ ոչ թէ հրէից մեծամեծների համար, այլ թէ այն փոփոխութեան համար, որ կատարուել էր ու տակաւին կատարւում էր իւր մէջ . . .

(Շարունակելի)